ՏԵՂԵԿԱՆՔ
Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2018 թվականի մայիսի 22-ին գումարված նիստերի մասին

N ը/կ	Հարցի անվանումը	Հեղինակը	Ծանոթություն
1	2	3	4
1.	**ա.** «Թափոնների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին, **բ.** «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին, **գ.** Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին **(երկրորդ ընթերցում, քվեարկություն)**	**ՀՀ կառավարություն** **Կ-248-** **31.01.2018,19.03.2018-** **ՏՏԳԲ** **Վաչե Տերտերյան**	Քվեարկվեց և ընդունվեց երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ՝ 77 կողմ, 1 դեմ, 0 ձեռնպահ ձայներով
2.	**ա.** Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին, **բ.** Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին, **գ.** Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին, **դ.** «Պրոբացիայի մասին» Հայաստանի Հանրապետու-	**ՀՀ կառավարություն** **Կ-309-** **26.04.2018,21.05.2018-** **ՊԻՄԻ** **Սուրեն Քրմոյան** **<u>ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ</u>**	Նախ քննարկվեց և ընդունվեց առաջին ընթերցմամբ՝ 81 կողմ, 7 դեմ, 0 ձեռնպահ ձայներով, ապա երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ՝ 76 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայներով

	թյան օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին		
3.	**ա.** «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, **բ.** «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին	**ՀՀ կառավարություն Կ-308-26.04.2018,18.05.2018-ՊԻՄԻ** **Արթուր Հովհաննիսյան** **<u>ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ</u>**	Քննարկվեց և ընդունվեց առաջին ընթերցմամբ՝ 90 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայներով
4.	«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին	**ՀՀ կառավարություն Կ-276-28.02.2018,21.05.2018-ՏՀ** **Շավարշ Քոչարյան**	Քննարկվեց և ընդունվեց առաջին ընթերցմամբ՝ 92 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայներով
5.	«Հայաստանի Հանրապետության կառավարության և Ֆրանսիայի Հանրապետության կառավարության միջև մի պետության պաշտոնական առաքելությունների աշխատակիցների ընտանիքի անդամների՝ մյուս պետությունում զբաղվածության մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին	**ՀՀ կառավարություն Կ-296-05.04.2018-ԱՀ** **Շավարշ Քոչարյան**	Քննարկվեց և օրենքն ընդունվեց՝ 92 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայներով
6.	**ա.** Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին, **բ.** «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատա-	**ՀՀ կառավարություն Կ-300-10.04.2018,18.05.2018-ՏՏԳԲ**	Քննարկվեց և ընդունվեց առաջին ընթերցմամբ՝ 92 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայներով

	ռելու մասին, **գ.** «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին	**Խաչիկ Հակոբյան** **<u>ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ</u>**	
7.	«Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին	**ՀՀ կառավարություն** **Կ-285-20.03.2018-ԱՍ** **Սմբատ Սաիյան**	Քննարկվեց և ընդունվեց առաջին ընթերցմամբ՝ 92 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայներով
8.	«Հայաստանի Հանրապետության կառավարության և Իսրայելի Պետության կառավարության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին» կոնվենցիան վավերացնելու մասին	**ՀՀ կառավարություն** **Կ-299-07.04.2018-ՏՀ** **Արմեն Հայրապետյան**	Քննարկվեց և օրենքն ընդունվեց՝ 90 կողմ, 0 դեմ, 2 ձեռնպահ ձայներով
9.	«Ղրղստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու վերաբերյալ» 2014 թվականի դեկտեմբերի 23-ին ստորագրված պայմանագրի առանձին դրույթների կիրառման վերաբերյալ» արձանագրությունը վավերացնելու մասին	**ՀՀ կառավարություն** **Կ-305-12.04.2018-ՏՀ** **Արմեն Հայրապետյան**	Քննարկվեց և օրենքն ընդունվեց՝ 92 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայներով
10.	**ա.** Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին, **բ.** «Գործունեության իրականացման ծանուցման մա-	**ՀՀ կառավարություն** **Կ-298-** **06.04.2018,21.05.2018-** **ՏՀ**	Քննարկվեց և ընդունվեց առաջին ընթերցմամբ՝ 92 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայներով

	սին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին, **գ.** «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին	**Արթուր Խաչատրյան**	
11.	Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդում (Գնաճի հաղորդում)	**ՀՀ կենտրոնական բանկ** **314-02.05.2018-ՖՎ** **Արթուր Ջավադյան**	ՀՀ Ազգային ժողովը քննարկեց հաղորդումը և ընդունեց ի գիտություն:
12.	«2017թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին» տարեկան հաղորդում	**ՀՀ մարդու իրավունքների պաշտպան** **295-04.04.2018-ՊԻՄԻ** **Արման Թաթոյան**	ՀՀ Ազգային ժողովը քննարկեց հաղորդումը և ընդունեց ի գիտություն:
13.	«Հայաստանի Հանրապետության դատախազության 2017 թվականի գործունեության մասին» հաղորդում	**ՀՀ դատախազություն** **289-29.03.2018-ՊԻՄԻ** **Արթուր Դավթյան**	ՀՀ Ազգային ժողովը քննարկեց հաղորդումը և ընդունեց ի գիտություն:

Մայիսի 22-ից մայիսի 23-ի նիստերի ընթացքում՝

- Հայտարարությամբ հանդես եկան 10 պատգամավոր:
- 8 պատգամավոր բանավոր հարցերով դիմեցին կառավարությանը:

- Արա Բաբլոյանը ներկայացրեց լիազորությունները վաղաժամկետ դադարած պատգամավորների՝ ՀՀ ԿԸՀ-ի մանդատները համապատասխան թեկնածուներին տրամադրելու մասին 6-11-րդ արձանագրությունները: Ըստ այդմ «Ելք» կուսակցությունների դաշինքից պատգամավորական գործունեություն կսկսեն Ալեն Ռոբերտի Սիմոնյանը, Հրաչյա Վաչիկի Հակոբյանը, Հովիկ Հովսեփի Աղազարյանը, Հայկ Արսենի Կոնջորյանը, ՀՀԿ-ից՝ Հակոբ Գառնիկի Հակոբյանը, ՀՅԴ-ից՝ Ռուզաննա Հակոբի Առաքելյանը: Համաձայն «ԱԺ կանոնակարգ» սահմանադրական օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի՝ նորընտիր պատգամավորները երդվեցին:

- 23.05.2018թ. Արա Բաբլոյանը հայտարարեց ՀՀ ԱԺ պատգամավոր Ալեն Սիմոնյանի հրաժարականի դիմումի մասին:

«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե հրաժարականի հրապարակումից հետո՝ մեկ շաբաթվա ընթացքում, պատգամավորը գրավոր դիմումով հետ է վերցնում հրաժարականի մասին իր դիմումը, ապա Ազգային ժողովի նախագահն այդ մասին հանդես է գալիս հայտարարությամբ, եթե հետ չի վերցնում հրաժարականի մասին իր դիմումը, ապա նրա լիազորությունների դադարման մասին կազմվում է արձանագրություն, որն ստորագրում եւ հրապարակում է Ազգային ժողովի նախագահը: Արձանագրության հրապարակման պահից հրաժարականը համարվում է ընդունված»: